ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

01.06.2023 18:20

Փաստաբանների պալատում այսօր տիրում էր հունիսմեկյան խանդավառություն:

Փաստաբանների երեխաների օրը տոն դարձնելու համար Փաստաբանների պալատը և Փաստաբանական ակադեմիան կազմակերպել էին բազմաթիվ անակնկալներ, ինչպես նաև մուլտհերոսների մասնակցությամբ խաղային , պարային և համերգային ծրագրեր:

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ իրականացվեցին տարատեսակ միջոցառումներ, որոնք յուրաքանչյուր դրվագով ապահովեցին փոքրիկների ուրախ ժամանցը և գունավորեցին նրանց օրը:

Միջոցառման ընթացքում նաև Հայաստանի ռազմական թաեքվանդոյի երեխաների ցուցադրական խումբը երեխաների համար հանդես եկավ ամենատարբեր մարտարվեստների շոուներով:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը շնորհավորելով Երեխաների պաշտպանության միջազգային օրը, ընդգծեց, որ պետք է անել ամեն ինչ, որպեսզի երեխաները ունենան երջանիկ ու անհոգ մանկություն՝ խաղաղ հայրենիքում:





1
ՄԱՐԱԼԻԿ





Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })